«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ոստիկանության ծառայողը և ոստիկանության ուսումնական հաստատությունում սովորողը, այդ թվում՝ ուսումնական այլ հաստատություններ գործուղվածը ոստիկանությունում ծառայությունից ազատվելու դեպքում պարտավոր է փոխհատուցել իր՝ Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության համապատասխան ուսումնական հաստատություններում ուսման, վերապատրաստման համար պետության կողմից կատարված ծախսերը, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերի:

2. Ոստիկանության ծառայողը և ոստիկանության ուսումնական հաստատությունում սովորողը, այդ թվում՝ ուսումնական այլ հաստատություններ գործուղվածը ոստիկանությունում ծառայությունից ազատվելու դեպքում չի փոխհատուցում իր՝ Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության համապատասխան ուսումնական հաստատություններում ուսման, վերապատրաստման համար պետության կողմից կատարված ծախսերը, եթե նա՝

1) ոստիկանության ուսումնական հաստատությունում բարձրագույն մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթություն ստանալուց հետո ոստիկանությունում ծառայել է ոչ պակաս, քան հինգ տարի, կամ նախնական մասնագիտական կրթություն ստանալուց կամ վերապատրաստումը անցնելուց հետո՝ ոչ պակաս, քան երկու տարի.

2) ծառայությունից ազատվել է սույն օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2.1-ին, 4-րդ, 10-րդ, 12-րդ կետերով սահմանված դեպքերում, կամ անձնական նախաձեռնությամբ՝ պայմանավորված ընտանիքի հաշմանդամ անդամի խնամքով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է ուժի մեջ մտնելուց հետո ոստիկանության ուսումնական հաստատության սովորողի կարգավիճակ ձեռք բերած անձանց, այդ թվում՝ ուսումնական այլ հաստատություններ գործուղված անձանց և ոստիկանության ուսումնական հաստատությունում վերապատրաստում սկսած ոստիկանության ծառայողների վրա: